ԹՈՒՐՔԻԱ

—

Վիէննայի «Politische Corresp» լրագրին, մայիսի 28-ից գրում են հետևեալը:

«Չէ կարելի չը խոստովանվել, որ ռուսները շատ պատճառներ ունեն խաղաղ որամադրութիւն ունենալու դէպի Թիւրքիան: Հասաւ ժամանակը այժմ կամ երբէք դիմադրելու արևմտեան պետութիւնների ազդեցութեանը, և ռուսները բոլորովին հասկացան այդ: Պ. Նավլիով, ինչպէս լսում է, միամտացից սուլթանին և Սաֆաս-փաշային, որ իրաւունք է տալիս նրանց մոռանել, որ նրանք, ներկայ դժուար հանգամանքներում, կարող են յուսալ Ռուսաստանի պաշտպանութեան վրա: Ցաւալի կը լինէր, ի հարկէ, եթէ այդ յոյսը սուտի կամայնէր Թիւրքաց կառավարութիւնը իր յամառութեան մէջ, Եւրոպայի կամքի հակառակ գնալով, և դժբաղդաբար, Թիւրքաց մամուլի մի քանի օրգանների մէջ կառավարութեան այդպիսի որամադրութեան նշանները արդէն երևում են:

Զօրս օր առաջ «Թերջիմանի Հակիքաթ» լրագրի մէջ, որ սուլթանի օրգան է համարվում, երևեցաւ մէկ խիստ յոդուած Գօշէնին տուած յանձնարարութեան վերաբերութեամբ: «Թիւրքիան, ասվում էր յոդուածի մէջ, չէ կարող համբերել, երբ տեսնում է, որ Եւրոպան խառնվում է իր մասնաւոր գործերի մէջ, և կայսերութեան ժողովուրդները, որ այնպէս մեծ զոհեր արեցին վերջին պատերազմի ժամանակ, իրանց վերջին կաթիլ արիւնը կը թափեն պաշտպանելու փաղիշահի անկախութիւնը և իրաւունքները: Այս յոդուածին, մանաւանդ ներկայ ժամանակում նշանակութիւն է տալիս ամենքին յայտնի սուլթանի հրաւէրը մահմեդականների ֆանատիկոսութիւնը զրգռելու համար: Այդ հրաւէրը, կարծես, Բ. Դրան առաջուց կազմված պատասխան է Բերլինի դաշնագիրը սորոգող պետութիւնների փաստել զրութեանը: Գօշէնի յանձնարարութիւնը, որպիսի և լինէր նա, չի թեթևանայ: Դեսպանին սպասում են այսօր և պալատի առաջին թարգման Մուհիդդին, երեք օր է արդէն, որ ուղևորվել է Գարդանել պ. Գօշէնին դիմաւորելու համար: Սամսոյի մէջ պատկերազարդ ծաղրական թերթում Գօշէնը նկարված է այսպէս. նա իջնում է «Դեվլիօ»-ից և սպառնալից դէմքով, բարկութիւնից դուրս ցայտած աչքերով և ձեռքի հրամայական շարժումով դառնում է Թիւրքին, որ կանգնած է նրա առաջ խոնարհ և երկիւղալից կերպով: Նկարի տակ գրված են հետևեալ խօսքերը. «Նա գալիս է աքաղաղի նման, բայց կերթայ որպէս թրջված հաւ»: Սա արդէն ցոյց է տալիս, թէ Թիւրքերը ինչպէս են նայում Գօշէնին տուած յանձնարարութեան վրա: «Վակիթ» և ուրիշ լրագրներ շտապեցին Վիէննայի մէջ լրագրի յոդուածը արտատպել, որի մէջ հաստատապէս խօսվում էր այն բանի մասին, իբր թէ Գօշէնը պ. Գէյմերլէին Թիւրքիայի վերաբերութեամբ շատ ազատամտական դուռ: Անկասկած, աւստրօ-ունգարական կառավարութիւնը, Թիւրքիայի վերաբերութեամբ, կը հետևի պաշտպանական օպորտիսիոն Բերլինի դաշնագրութեան սահմաններից դուրս: Եթէ, օրինակ, որ անհաստատի բան է, թեպէտ շատերը հաստատում են այդ բանը,—պ. Գօշէնը իր հետ Թիւրքիան բաժան բաժան անելու նախագիծը կը բերի, այն ժամանակ նա, ի հարկէ, չէս կարող ունենալ Աւստրիայի գործակցութեան վրա. բայց թող հասկանան Թիւրքերը, որ աւստրօ-ունգարական դեսպանը միշտ պատրաստ կը լինի գործ դնել իր տէրութեան բոլոր ազդեցութիւնը, երբ խօսք կը լինի Բերլինի դաշնագրութեան յոդուածների կատարելու վրա, որոնք վերաբերում են Զերնոզորիային, Ռումելիային և Հայաստանին, նոյնպէս և ներքին վերանորոգութիւններին, որոնց անհրաժեշտութիւնը այդքան համարձակ և պարզ յայտարարվել է:

ԱՆԳԼԻԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԸ

—

„Голосъ“ լրագրի մէջ տպված է հետևեալ առաջնորդող յոդուածը:

Գերմանիայից յետոյ այժմ ամենից աւելի հետաքրքիր են Անգլիայի ներքին գործերը: Միջագեռ Բերլինի մէջ պարլամենտական կեանքը սպանված է իշխան Բիսմարկի երկաթեայ կամքով, պէտք է զարմանալ, որ անգլիական սահմանադրական մեքենան չափազանց կանծնաոր է գործում: Ինչպէս Բերլինում, նոյնպէս և Լօնդոնում կային մարդիկ, որոնք ցանկանում էին իրանց անձնական կամայականութեամբ խանգարել այդ մեքենայի կանծնաոր գործողութիւնը: Ինչպէս Բերլինում, նոյնպէս և Լօնդոնում տաղանդներ կային, որոնք եռանդով ձգտում էին հասնել այդ նպատակին: Այդ ձգտումները անհնազան այնպիսի մի հասարակութեան օրինաոր դատավճռով, որ գաղերի ընթացքում ընտելացել է քաղաքական կուսակցութեան շրջանը և շարունակում է ծառայել իր պատութեանը: Երկու պետութիւնների քաղաքական դրութիւնների և Եւրոպայի երկու միատեսակ պետական զորձիչների մէջ եղած զանազանութիւնը աչքի է ընկնում և առիթ է տալիս զանազան մտածմունքների:

Մենք մտադիր չենք քննել այդ զանազանութեան պատճառները, այլ կամենում ենք մատնացոյց լինել Անգլիայի ներքին քաղաքական դրութեան վրա, որ Եւրոպայի համար նշանակութիւն ունի և որ սովորում է նրան իր քաղաքականութիւնը համեմատեցնել Անգլիայի քաղաքականութեան հետ:

Ամենից առաջ պէտք է ուշադրութիւն դարձնել Անգլիայի վայելած ներքին հանգստութեան վրա: Այդ հանգստութիւնը չը խանգարվեցաւ ոչ ներքին և արտաքին դժուարութիւններից և ոչ վերջին ժամանակներում կատարված պետական փոփոխութիւնից: Թէպէտ անգլեացիներից շատերը չփոթված են այդ փոփոխութեան պատճառով, բայց նրանցից ոչ մէկը չէ վախենում երկրի ապագայի համար: Ուրիշ պետութիւնների մէջ անհաստատութիւնը փոքր փոփոխութիւնները չափազանց անհանգստացնում են հասարակութեանը:

Անգլիական նոր կառավարութիւնը պէտք ընդդիմադրէ բաւական նշանաւոր դժուարութիւններին: Բացի տնտեսական չը վերացրած և դժուար պատերազմը, կան ներքին ծանր գործեր, ինչպէս սոցիալական և իրաւական խնդիրները, որոնց հետևանքները ոչ ոք չէ կարող նախագուշակել և որոնք կարող են հաւասարվել Եւրոպական ամենածանր քաղաքական շփոթին: Ամենամեծագոյնը անգլիական հասարակութիւնը հանգիստ է և երկիւղ չունի այնպիսի մի ապագայից, որ շրջափոում է ուրիշ հասարակութիւններին ամենի անհնազան քաղաքական հանգամանքների ժամանակ:

Անգլիայի մի ուրիշ յատկանիշ կողմի վրա էլ պէտք է ուշադրութիւն դարձնել: Անգլիական նոր կառավարութիւնը անյապաղ տուեց թէ ներքին և թէ արտաքին գործերին վերաբերեալ իր կարգադրութիւնները, չը նայելով, որ նրա հայեացքները բոլորովին զանազանվում են նախին կառավարութեան հայեացքներից և որ անապատել կերպով իշխանութիւն ստացաւ: Այդ կարգադրութիւնները անելու համար ուրիշ երկիրներում կանցնեալ բրիական պատասխանական այնպիսի աշխատանքներ կը հարկաւորվեին, որոնք տարիներ կը տևէին. Անգլիայի ժամանակակից դրութեան վրա հայեացք գցելուց յետոյ, մենք հասնում ենք հետևեալ եզրակացութեանը, որ նրա քաղաքական ուղղութիւնը նպատաստ է Եւրոպական խաղաղութեանը: Ինչ սեսակ էլ լինեն անգլիական կառավարութեան հայեացքները, միւս պետութիւններ պէտք է նրանց ի նկատի ունենան:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 22 մայիսի

Պ. Կօչեն, անգլիական նոր լրագոր դեսպանն, երէկ ներկայացաւ Սուլթանին և մատոյց իրեն իւր վկայագիրը: Գործելու ժամանակ սկսած կարող ենք համարել, զի միւս տէրութեանց դեսպանք այս պաշտօնական արարողութեան միայն կը ապասէին.—Դալս, պիտոյ է ձեզ ըսել թէ պ. Կօչէնի Պոլիս գալը քրիստոնէից վրայ այնչափ ազդած է, որչափ որ պ. Լէյարդի դեսպան անուանումը ի սկզբան, ասկէ մի քանի տարի յառաջ ցնծացուց իսլամները, որոնք մինչև իսկ կարծեցին թէ պ. Լէյարդ Պոլիս կը մտնէր իր զրպանին մէջ ունենալով Թուրքիոյ և Անգլիոյ միջև կնքուելու մի նիզակցութեան դաշինք: Իսկ այժմ, քրիստոնեայք, Տերին իրենց գալով, կը հաւատան թէ պ. Կօչէն վեց տէրութեանց հետ արդէն կնքեր է մի ծանուցագիր, որով կը պահանջուի Բարձրագոյն Դռնէն գործադրել անյապաղ Պերլինի դաշնագրին տրամադրութիւնքը վերաբերութեամբ Գառա-Ֆաղի, Ցունանստանի և Հայաստանի: Այսօր կամ վաղիւ, դեսպանները հաւաքաբար սոյն ծանուցագիրը պիտի մատուցանեն կառավարութեան, բայց հետաքրքրականն այն է, թէ կառավարութիւնն ամէն կերպով յայտնած է և դեռ կը յայտնէ թէ իր բոլոր ուժով պիտի մերժէ օտար միջամտութիւնն իր գործոց մէջ: Կարելի չէ զուշակել ինչ վերջ պիտի ունենան այս ամէն չարժմունք և դժկամակութիւնք: Ցէյլի-Նիւզ, անգլիական ազատականաց բերանը, վերջերս կըսէր թէ Թուրքիա ոչ թէ միայն զինքն, այլ և Հայոյն Եւրոպա հրաւէրի վրայ կը դնէ իր անմամսա ընթացքով: Մեր միտքովդը լի է ելեկտրականութեամբ: Անպատճառ կայծակներ պիտի փայլատակին և ով գիտէ ինչ հրդեհ պիտի վառեն.—Ամէնք իւր ուշքը դարձուցեր է Արևելեան Ռումելիի վրայ, որոյ կառավարիչը, Ալեքս-փաշա, կը պատրաստուի երթալ Եւրոպա, անտարակոյս Եւրոպական դաշինքները մի որ և է համաձայնութեան մէջ մտցնելու համար: Ուստի հաւանականութիւն կայ թէ Արևելեան Ռումելի թերեւս իր միութիւնը Պուլկարիոյ հետ կնքելու յայտնի, մի բան, որոյ վրայ Անգլիոյ նոր պաշտօնէութիւնը չատ զուարթ աչք պիտի նայի, երբ յիշենք թէ պ. Կլատսթոն Եւրոպական Թուրքիոյ մէջ գործել կուզէ բոլորովին հակառակ լորտ Պիկնսֆիլդի մեթոդին: Ասիոյ մէջ կացութիւնը նուազ յուսահատեցուցիչ չէ, Պասորայի կողմերը Միսիէֆֆեկ արաբներն ապատատված են և 10.000 պրուսիոյ Մանսուր-փաշան պաշարեր է արդէն իր դէմ ղրկուած մէկ քանի ջոկատ Թուրք զինուորները: Սովը, ահաւոր սովը, իւր սև թեւերը կը տարածէ ամէն կողմ. Ամբողջ Փոքր-Ասիոյ կը տառապի այս աղետին մէջ. Պոլսէն երկու քաղ հեռու, Մարմարայի եզերքը բնակիչք կը տուայտին. Այս ամէն անշուշտ պատերազմից և նա մանաւանդ անկանեան վարչութեան մը հետևանքներն են, բայց ինչ դժոխային ցնծութիւն կը զգան Թուրքերն այս ընդարձակ կոտորածը լսելով, հնար չէ նկարագրել: Պէտք է այդ տեղի հայերը գիտենան թէ Թուրք կառավարութիւն ոչ միայն մի փրկարար միջոց ձեռք չառաւ սովը դադրեցնելու համար, այլ ամէն կարելի որոշումներն և մեքենայութիւններն ըրաւ այս ազգան աւելի ընդարձակելու համար—Տարակոյս չը կայ թէ անօթութիւնէ Թուրքերն ալ կը մեռնին, բայց այդ փոյթ չէ. կառավարութեան համար կարևորն է որ հայք փոքր-Ասիոյ մէջ նուազին: Թուրք ցեղին նուազումը, գոնէ այժմ քաղաքական վնաս չը բերէր իրեն, բայց, երբ մի հայ գլուղ, մի հայ քաղաք կը քանդուի, հայկական խնդիրը մի քայլ եռ կերթայ: Մենք, ամէնիս ըմբռնած ենք այս տեղ մեր մարդասէր փաշաներուն ինչպարտիկ գաղափարներն և կարևոր է որ դուռ ալ պէտք է ըմբռնէ. թերևս իմացեր էք մինչև ցարդ, որ Սատրազամը, այլ ներիկելու համար, մի մասնախորհուրդ կազմեց, (ուր մի հայ չը կայ), այն պատճառով որ դուռ հաւաքելով սովելոց օգնութեան համար, մէկ քանի օտար սեղանաւորք 25.000 բուրլի չափ առաջին տրէն ժողովեցին և, ուրիշ 5 բարայ իր յատուկ գործունէութեամբ այդ մասնախորհուրդը հաւաքած չէ. Բարեբախտաբար Ազգային մասնախումբը մէջ տեղ կայ որ քիչ մը կարդէ, և այն էլ ինչ չարչարանքներով, եթէ գիտնայիք: Մի օրինակ. Կարիքն մասնաւոր մարդ կը լղտէ Պուլանրիս, որ դրամով ցորեն գնէ կարօտելոց ղրկելու համար: Ցեղոյն կառավարիչը պարզարար կարգելէ. Ալ դուք մակարեցէք թէ ինչպէս կը հնարեն ուտեստ գտներ: Սադրազամ հրաման չը տուաւ որ եւրոպական ազգաց գիտարութեան դիմի, իր կամքն է որ մեր ազգատացած երկրին ազգիչներով ժողովուրդն իրեն զինքը հոգայ: Ինչ կարելի է ընել, այս է ամենակարող սադրազամին կամքը. Սովին չարեաց վրայ յաւելցուր քիւրդերուն հարստահարութիւնք որ օրեց օր կարծես աւելի կանեն, Թրմման սարսափահար հեռացրեց թէ քիւրդերը դաշտերը կ'ասպատակեն և նորարոյզով տունկերը կը ջարդեն, թող ըրած՝ գողութիւններն և սպանութիւններն, Արքական Պատրիարք Հայրը, իրաւապէս յուզեալ, գանգատագիր ղրկեց առ սէրութեանց դեսպանս և մի ադերսագիր էլ առ Սուլթան: Սուլթանը պատասխանեց մի ամենայոր նամակով, նամակ մը, որ Ս. Պատրիարքէ իրեան անձի մը պիտի գործէր չատ ծանր և զըժուարակիր տպաւորութիւն մը Լրագրաց մէջ այս նամակին վրայ խօսուեցաւ, բայց պարտականութիւնը տարբեր է լրագրաց տուածէն. Ձիշդն այս է. Սուլթանը ցաւ կը յայտնէ որ սովը կը տիրէ իր երկրին մէջ, և արդէն այդ չարքերն դարման տանելու համար մասնախորհուրդ մը կազմեր տուած է. Գալով քրդոց հարստահարութիւններուն, Սուլթանը զանոնք չափազանց կը դատէ, կը խոստանայ մասնաւոր «Եվարիներ» թիկնապահներ ղրկել Հայաստան քննութեան համար, կը սպասնայ եթէ այդ հարստահարութիւնք սուտ ելնեն պատասխանատու բռնել Ս. պատրիարք հայրը: Այս պատասխանատուութեան բառը կրնայ վախցուցեալ առջի բերան, բայց խորը նայելով, վտանգ մը չեմ տեսներ. Այս յայտնի է թէ պապաը և Սադրազամը յետին ծայր զայրացած են պատրիարքին դէմ, որ իւր կողմէն անցեալ օր հեռագրեց Թրմմանին ի վան, որ պատրաստ մատուցանէ վասն կենաց սուլթանին զի սովելոց համար մի չ՝ մեծ հոգածութիւն կը ցուցնէ, Սուլթանին նամակը պատրիարքն ալ կը ջանայ որչափ կարելի է վնասակար հետևանք մը չունենալու դատապարտել, նորանոր թագրիրներ Դռան ղրկելով, ուր պատմուած կան ամէն տեսակ գործածուած չարագործութիւններ: Այն աղբյաղիծ ղրէն աւելի հետաքրքրականը կայ. Գուցէ չէք գիտեր թերևս թէ Սադրազամ Սայիտ բայն վեց ամսէ Ներսէսը հայոց Պատրիարքական գահէն տապալելու կը ջանայ. Իր մեծ չորս հայ բարձր պաշտօնեաներ կը կանչէ վերջերս և նոցա մտաւորապէս այս խօսքերը կը ղրուցէ. «Գուցէ հայ էք, դուք անչուշտ կը սիրէք ձեր ազգը, զոր Ներսէսը կորսնցուցեալ եղած է իր փառասիրութեամբ. Ուստի այդ անձը ջանացէք պատրաստութեամբ հրաժարեցնել». Այս էֆէնդիները խոստացեր են, թէ ով են, հոս մենք գիտենք և ձեզ եթէ ըսուի, դուք չը պիտի համաչէք. Սա գիտացէք միայն թէ մին բժիշկ է և հռչակաւոր բժիշկ, մին իր մասկութեան մէջ իրաւագիտութիւն ուսեր է, միւսն ամէն բան է և ոչ մի բան չէ, երրորդն ալ մի պետական մարդ: Որչափ որ այս պաշտօնեայք խոշոր բաներ լինեն, Ս. պատրիարքը վասահ է իր ազգին լրամտութեան և ազգասիրութեան վրա, և երիտասարդութիւնը այսօր այժ մ'է զոր անտես ոչ ոք կարող է ընել:

***

ԱՐՍԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդոնում հրատարակվող „Standart“ լրագրին Վիէննայից հեռագրում են, որ դեսպանների միաբան գրութեան նախագիծը սաստիկ է այնտեղ յունիսի 3-ին: Ամենքը հաւատացած են, որ այդ գրութիւնը հաւանութիւն ստացաւ և ընդունվեցաւ բոլոր պետութիւնների կողմից, որովհետև նա պարունակում է իր մէջ պետութիւնների փափաքած համաձայնութիւնը լոր Գրենվիլի առաջարկութիւնների վերաբերութեամբ: Գրութիւնը պատանդում է, որ վերջացնվին այն բոլոր հարցերը, որոնք չեն վճռվել Բերլինի դաշնագրի համեմատ, իսկ յունական սահմանների խնդիրը յանձնվի լրացուցիչ կոնֆերենցիայի քննութեանը:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿՈՒՆԻ